Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Ակնալճի Ա. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ի «ֆիզկուլտուրա» /15 դասաժամ/, «ֆրանսերեն/14 դասաժամ/, «երգ-երաժշտություն» /3 դասաժամ/, «կերպարվեստ» /1 դասաժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

✓ Մրցույթի մասնակիցների գիտելիքներն և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի, ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված հարցաշարի:

✓ Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

✓ Փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի փետրվարի 7-ից փետրվարի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, աշխատանքային օրերին:

✓ Մրցույթը կկայանա **2024 թվականի փետրվարի 23-ին՝ ժամը 14:00-ին** «Ակնալճի Ա. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

✓ Տեղեկությունների համար զանգահարել 077-22-77-04 հեռախոսահամարով: